

ՀԱԱՀ ուսանողների վերաբերմունքը հեռավար ուսուցման նկատմամբ

Որակական հետազոտություն



Հետազոտությունը նախաձեռնել և
իրականացրել է ՀԱԱՀ ՈԳԱ կենտրոնը



www.anau.am

qualityassurance@anau.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նկարագրություն.....	3
Հիմնական բացահայտումներ.	6

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՆՊԱՏԱԿ	- Ուսումնասիրել ՀԱԱՀ ուսանողների՝ հեռավար ուսուցման նկատմամբ վերաբերմունքն ու ընկալումները - Վերհանել կատեգորիաներ քանակական հետազոտության համար խնդրի հետագա առավել լայն և մասշտաբային ուսումնասիրության համար
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ	- Ուսումնասիրել ՀԱԱՀ ուսանողների՝ հեռավար ուսուցման փորձը. առավելություններն ու սահմանափակումները - Գնահատել նրանց վերաբերմունքը հեռավար ուսուցման որակի, բովանդակության, կազմակերպման նկատմամբ - Վեր հանել խոչընդոտները, խնդիրները, որոնց ուսանողները բախվել են հեռավար ուսուցման ժամանակ - Գնահատել ուսանողների կրթական կարիքները - Գնահատել ՀԱԱՀ-ի նկատմամբ վերաբերմունքը և դրա հիմքում ընկած դրդապատճառները
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ	- Որակական հետազոտություն. ֆոկլուս-խմբային քննարկումներ ոչ ստանդարտացված հարցաթերթով*: - Քննարկումները կազմակերպվել են առցանց՝ ZOOM հարթակի միջոցով - Ընտրանքի ծավալ՝ 4 ֆոկլուս-խմբային քննարկում: Կիրառվել է բազմաստիճան ընտրանք՝ հնարավորինս ապահովելու մասնակիցների՝ տարբեր չափանիշներով ընդգրկվածությունը ** ** Ընտրանքի կառուցվածքը մանրամասն ներկայացված է slide 5-ում:
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ	14.06.20– 20.06.20

• Ֆոկլուս խմբային քննարկումը հետազոտական մեթոդ է, որը մեկ սենյակում միավորում է 6-10 հոգի՝ քննարկելու հետազոտության առարկան և վերհանելու դրա նկատմամբ թիրախային լսարանի վերաբերմունքը: Քննարկումը վարում է հատուկ պատրաստված մասնագետը, որն ունի նախապես մշակված հարցերի ցանկ և դրանց շուրջ ծավալում է քննարկումը:

- Ֆոկուս-խմբային քննարկման համար մասնակիցների հավաքագրումը կատարվել է ֆակուլտետների դեկանների միջոցով՝ համաձայն հետևյալ չափանիշների՝
 - ✓ Սեռ՝ արական/իգական (50%/50%)
 - ✓ Ֆակուլտետ՝ ընդգրկվել են ՀԱԱՀ բոլոր 5 ֆակուլտետներից ուսանողներ: Ամենամեծ ֆակուլտետներից խմբերում ընդգրկվել են 2 ական մասնակից:
 - ✓ Բնակության վայր՝ Երևան/մարզ (70%/30%)
 - ✓ Կրթական մակարդակ՝ Բակալավր/մագիստրատուրա (50%/50%):
 - ✓ Կրթության կազմակերպման ձև՝ առկա/հեռակա (50%/50%) խմբային քննարկումները կազմակերպվել են առանձին-առանձին
 - ✓ Կուրս՝ ավարտական/ոչ ավարտական* (50%/50%) խմբային քննարկումները կազմակերպվել են առանձին-առանձին:


ՖԻ #	Կուրս	Կրթության կազմակերպման ձև	Կրթական մակարդակ	Բնակության վայր
1	Ավարտական	Առկա	Բակալավր/մագիստրատուրա	Երևան/մարզ
2	Ավարտական	Հեռակա	Բակալավր/մագիստրատուրա	Երևան/մարզ
3	Ոչ ավարտական	Առկա	Բակալավր/մագիստրատուրա	Երևան/մարզ
4	Ոչ ավարտական	Հեռակա	Բակալավր/մագիստրատուրա	Երևան/մարզ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ



ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ. ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐՆ ԸՍՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

ԴՐԱԿԱՆ



ՄԵԶԲԵՐՈՒՄ

Կրթության որակն
առանձնապես չի
տուժել, եթե
ցանկություն ունես
սովորելու...
Օնլայնի ժամանակ
հնարավոր է լինում
դասը մի փոքր
երկար անել և
ստանալ բոլոր
հարցերի
պատասխանները:

- ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆ ԱՌԱՎԵԼ ԳԵՐԱԿՇՈՌՂ Է, ՀԵՌԱՎԱՐԸ, ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎ, ՈՂՋՈՒՆՎՈՒՄ Է, ԵՎ ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ Է ԴՐԱ ԱՆԸՆԴՀԱՏ ԼԻՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՊԵՍ ՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ, ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ:

- Որպես ուսուցումը հեռավար կազմակերպելու դրական կողմ նշվում են

- **Ռեսուրսների խնայողությունը** (ժամանակային, ֆինանսական ծախսեր): Այն շեշտադրվում է հատկապես՝

- ✓ Մարզերում բնակվող ուսանողների կողմից
- ✓ Աշխատող ուսանողների կողմից
- ✓ Ընտանիք ունեցող ուսանողների կողմից

- **Դասերին մասնակցության ցուցանիշի բարձրացումը** → ֆիզիկապես ներկա չգտնվելու հնարավորությունը հանգեցնում է բացակայությունների նվազեցմանը, դասերից ուշանալուց խուսափելուն հատկապես վերը նշված խմբերի համար:

- Դասերի կազմակերպման **ժամային գրաֆիկների ճկունությունը** → երկուստեք հարմարվելու, բաց թողնված դասերը լրացնելու հնարավորությունը:

- **Դասավանդման պրոցեսը կազմակերպելու առավել լայն հնարավորությունները** → սլայդշոուներ, նկարներ, տեսահոլովակներ ցուցադրելու հնարավորություններն առավել լայն են ի համեմատ լսարանային պայմանների, նյութերը էլ-փոստով ուղարկելու հնարավորությունները մեծ են:


!! Ուշադրութուն. խոսքը գնում է առավելապես ոչ գործնական դասերի մասին:

- **Դասախոս-ուսանող հարաբերությունների բարելավումը** → շփումները դարձել են առավել ինտենսիվ, դասախոսները հասանելի են տարածության և ժամանակի մեջ, ընդլայնվել են դասախոսներին ցանկացած ժամանակ հարցով դիմելու հնարավորությունները:

- Ավարտական կուրսերի ուսանողների համար դիպլոմայինների/թեզերի **պաշտպանության ժամանակ հոգեբանական մթնոլորտը**՝ հարմարավետ, անկաշկանդ, լարվածությունից զերծ միջավայրի հնարավորությունը

!! Ուսանողներին ամենաշատը գրավում է հոգեբանական հանգստության առկայությունը → դասերին ժամանակին հասնելու, ներկա գտնվելու լարվածության բացակայությունը, առավոտյան հանգիստ քնելու հնարավորությունը:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐՆ ԸՍՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ



ՄԵԶԲԵՐՈՒՄ

Ուսանողը կարող է տեսախցիկն անջատել, կարդալով քննություն ստանալ, ու դասախոսը վերահսկողություն չունի:

Տանից ավարտելը հաճելի չէր...

Դասախոս կար, էնքան հետաքրքիր էր դասը, բոլորս տեսախցիկները միացնում էինք: Իսկ դասախոս կար, տեսախցիկներն անջատում էինք, ոչ էլ լսում էինք...

ԲԱՑԱՍԱԿԱՆ

- Որպես ուսուցումը հեռավար կազմակերպելու բացասական կողմ նշվում են՝
 - **Տեխնիկական խոչընդոտները** → խնդիրը հատկապես սուր է եղել առաջին մեկ ամսում՝
 - ✓ Թե ուսանողների, թե դասախոսների մի մասը **չեն ունեցել տեխնիկական հնարավորություններ** դասերին միանալու համար (ինտերնետ, համակարգիչ և այլն)
 - ✓ Ժամանակը արդյունավետ կազմակերպելու հմտությունները թույլ են արտահայտված եղել → ներկա/բացակա կատարելը, ծրագրերին չտիրապետելը, հանգեցրել է լրացուցիչ ժամանակի կորստի դասապրոցեսի հաշվին:
 - **Կրթական պրոցեսը լիարժեք կազմակերպելու հնարավորությունների բացակայությունը**, մասնավորապես՝
 - ✓ **Գործնական դասերի** կազմակերպում → հազվագյուտ դեպքերում խնդիրներ չեն ծագել դասախոսների անհատական մոտեցման շնորհիվ → որոշ դասախոսներ բացը լրացրել են տեսահոլովակներ ցուցադրելու միջոցով:
 - ✓ **Խմբային քննարկումների** կազմակերպում → դասի ժամանակ հարցուպատասխանի հնարավորությունները սահմանափակ են՝ պայմանավորված աղմուկը վերահսկելու հնարավորությունների բացակայությամբ:
 - ✓ **Սլայդշոտների միջոցով դասի** կազմակերպում → խնդիրը հատկապես նկատվել է տարեց դասախոսների մոտ:
 - ✓ **Գիտելիքների ստուգման մեխանիզմների բացակայությունը** → թեստերի, quiz-ների առկայությունը, որոնք կնվազեցնեն արտագրելու հնարավորությունները:
 - ✓ **Ուսանողի նկատմամբ վերահսկողության բացակայությունը** → ուսանողների՝ դասերից զերծ մնալու հնարավորությունները տեխնիկական խնդիրների պատճառաբանությամբ մեծ են, որոնք անվերահսկելի են դասախոսների կողմից → հնարավորություն կա արհեստական ներկայություն ապահովելու և դասին չմասնակցելու, որոնց ստուգման մեխանիզմները դեռ բացակայում են:
 - **Հոգեբանական խոչընդոտները** → ուսանողական կյանքից զերծ մնալը, շփումների բացակայությունը, տանը սովորելիս կենտրոնանալու դժվարությունները, շեղող հանգամանքների առկայությունը, անորոշության զգացումը:

ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Իդեալական



“Wows”



Ցանկալի



Պարտադիր



Ռացիոնալ

Ունիկալ
պահանջումներ

- Մասնագիտական աշխատանքի երաշխիքներ – ավարտելուց հետո աշխատանքով ապահովված լինելու հնարավորություն, բավարար պրակտիկ գիտելիքներ և հմտություններ ունենալու հնարավորություն

- Գրականության թվայնացում – հասանելիության բարձրացում

- Տեխնոլոգիապես զինված բուհ ունենալու հնարավորություն

Ցանկալի

Տարբերակող բնութագրիչներ, որոնք կարևոր են դառնում պարտադիր պահանջումների բավարարումից հետո

- Լսարանային պայմաններ – թարմ գույք, տեխնիկապես հագեցված լսարաններ, մաքրություն/հիգիենա

- Բուհի միջազգային համագործակցություն – փոխանակման ծրագրեր, ուսանողների միջազգային շարժունության հնարավորություններ

- Կրթության օպտիմալ կազմակերպում – առարկայական պլաններ, դասավանդվող առարկաների համապատասխանություն մասնագիտացումներին, կրթության տևողություն,

- Մասնագիտական գրականության հասանելիություն հայերեն լեզվով:

- Ինֆրաստրուկտուրաների զարգացվածություն – օր. հենաշարժական խնդիրներ ունեցողների համար կրթության հասանելիության բարձրացում:

- Դասավանդման մեթոդներ – ժամանակակից մեթոդների կիրառություն, դասախոսությունների օնլայն հասանելիություն:

- Մասնագիտական միջոցառումների կազմակերպում – կոնֆերանսներ, գիտաժողովներ, գործատուների հետ workshop-եր:

- ԲՈՒՀԻ անձնակազմի վերաբերմունք – բարեհամբուրություն, տեղեկատվության օպերատիվ տարածում

- Զեղչային համակարգի կիրառում- բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար:

Պարտադիր

Բազային պահանջումներ– առանցքային պահանջներ կրթության նկատմամբ

- Դասավանդող անձնակազմ – գիտելիքներ, փորձը պրակտիկ դաշտում

- Արդիականություն– մասնագիտությունների, առարկաների, մատուցվող նյութերի, գրականության շարունակական թարմացում ժամանակակից գիտության զարգացմանը համահունչ

- Գործնական գիտելիքներ – գործնական հմտությունների զարգացում, համագործակցություն մասնավոր ընկերությունների հետ
- Գործնական դասերի գերակշռում տեսական առարկաների նկատմամբ
- Լաբորատորիաների հագեցվածություն և ժամանակակից պահանջների հետ համապատասխանություն

ՀԱԱՀ-Ը ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ



ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **ԲՈՒՀի մասնագիտական ուղղվածությունը** → մենաշնորհային մասնագիտությունները, որոնք պատրաստում է միայն բուհը;
- **Արտաքին կապերի զարգացվածությունը** → փոխանակման ծրագրերի (օր, էրազմուսի ծրագրին մասնակցելու) հնարավորությունները, փորձի փոխանակման հնարավորությունները;
- **Դասախոսական անձնակազմը և կրթության մակարդակը** → գիտելիք ձեռքբերելու ընձեռնված հնարավորությունները;
- **ATC ազդեցիկներ և EVN ծրագրերով սովորելու հնարավորությունը;**
- **Ընդունելության կարգը** → քննություններով ընդունվելը, անվճար տեղերի հնարավորությունները;
- **Օնլայն կրթության կազմակերպումը** → շնորհիվ moodle հարթակի հեռավար կրթության արագ ինտեգրման հնարավորությունները:



ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Նյութատեխնիկական բազան** → լսարանների և լաբորատորիաների հագեցվածությունը, ժամանակակից տեխնոլոգիաների պակասը;
- **Պրակտիկ դասերի կազմակերպման հնարավորությունները** → *համարվում է մասնակի լուծված;*
- **Խստության բացակայությունը** → հանգեցնում է կրթության նկատմամբ անլուրջ մոտեցման ուսանողների մոտ;
- **Գիտելիքի արդիականությունը** → Ժամանակին համահունչ գիտելիքների, առարկաների թարմացումների բացակայությունը;
- **Բուհի իմիջը արտաքին շահակիցների շրջանում** → ընկալվում է ցածր մրցակից բուհերի նկատմամբ, կրթության որակի նկատմամբ առկա է վստահության բացակայություն:



ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նպաստել ԲՈՒՀի իմիջի բարելավմանը հետևյալ հնարավորությունների միջոցով՝
 - ✓ Փոխանակման ծրագրերի միջոցով տրամադրվող գիտելիքի արդիականացում;
 - ✓ Մասնագիտացումների ժամանակակից, ունիկալ, մրցունակ լինելու շեշտադրում;
 - ✓ ԲՈՒՀ ընդունվելու և սովորելու հնարավորությունների բարդացում (վարձավճարներ, ընդունելության կարգ, քննությունների նկատմամբ պահանջներ և այլն)՝ հանգեցնելով ուսանողների կրթական մակարդակի բարձրացման:



ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

- **Վարձավճարների ցածր լինելը** → թերահավատություն է առաջացնում մատուցվող կրթության որակի նկատմամբ;
- **Դասախոսական անձնակազմի բարձր տարիքային շերտ** → թերահավատություն է առաջացնում մատուցվող գիտելիքի արդիականության նկատմամբ;
- **Բուհի իմիջը** → նվազեցնում է ապագա ուսանողների հետաքրքրությունը բուհ ընդունվելու նկատմամբ:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

- Կրթական պրոցեսը լիարժեք կազմակերպելու հնարավորությունների բացակայությունն հեռավար եղանակով → հիմնականում կապվում է դասախոսների ոչ լիարժեք պատրաստվածության հետ:
- Գիտելիքների ստուգման մեխանիզմների բացակայություն → քննությունները կազմակերպելու հմտությունների բացակայություն:
- Հեռավար ուսուցումը, որպես կրթության կազմակերպման հետագա անքակտելի մաս կարևորվում է, հատկապես տեսական առարկաների դասավանդման դեպքում:
- Գործնական դասերի անցկացումը հեռավար եղանակով դժվար է ոչ նպատակահարմար → Գերակշռող դեպքերում գործնական դասերը չեն անցկացվել և դրանց հետագա կազմակերպումը դեռևս անորոշ է ուսանողների համար:

ՀԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

- Վերապատրաստումներ իրականացնել բուհի դասախոսական անձնակազմի հետ հետևյալ հմտությունների զարգացման նպատակով.
 - ✓ Համակարգչային գրագիտություն – Microsoft office, մասնավորապես Word, PPT ծրագրերով աշխատելու, սլայդ շտուներ կազմակերպելու հմտություններ: ZOOM ծրագրից օգտվելու հմտություններ՝ խմբային աշխատանքներ կատարելու, դասը տարբեր գործիքների կիրառությամբ վարելու հմտություններ:
 - ✓ Մշակել և ներդնել հեռավար եղանակով գիտելիքների ստուգման մեխանիզմներ (թեստեր, Quiz-ներ)՝ հաշվի առնելով առարկաների առանձնահատկությունները:
 - ✓ Դիտարկել և ներդնել հեռավար կրթությունը որպես բուհում կրթության կազմակերպման կարևոր ռազմավարական ուղղություն, հատկապես տեսական առարկաների դասավանդման համար: Այն հնարավորություն կտա ընդլայնել բուհում ուսանել ցանկացողների աշխարհագրական, տարիքային կազմը:
 - ✓ Մշակել և ներդնել գործնական դասերը կազմակերպելու մեխանիզմներ՝ հաշվի առնելով COVID19-ով պայմանավորված անհրաժեշտ անվտանգության միջոցառումները:
 - ✓ Ուսումնասիրել և տեղայնացնել միջազգային ու տեղական բուհերի՝ հեռավար եղանակով կազմակերպված գործնական դասերի հաջողված փորձերը: